ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.04.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2022/116

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ֆ. Մանգյանի

Պատվիրատու՝ «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ
Մասնակից՝ «Արայիկ Ծատուրյան» Ա/Ձ

Մասնակցությամբ՝
«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Պետրոսյանի
Արայիկ Ծատուրյանի, ներկայացուցիչ՝ Հ. Օհանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-22/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, գործիքների, կայանի գործունեության արդյունքում գոյացած թափոնների տեղափոխման և ոչնչացման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 14.03.2022թ.-ի թիվ 26/26-1/4242-2022 գրությամբ «Արայիկ Ծատուրյան» Ա/Ձ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի 04.03.2022թ.-ի թիվ ԱԳ/101-2022 գրության հիման վրա, 14.03.2022թ.-ին «Արայիկ Ծատուրյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 14.03.2022թ.-ին:

14.03.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-LO-2022/116 համարի ծածկագիրը:

23.03.2022թ.-ին և 01.04.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 23.03.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 01.04.2022թ.-ին:

2. «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ն 04.03.2022թ.-ի թիվ ԱԳ/101-2022 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպված ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-22/2 ծածկագրով կայանի գործունեության արդյունքում գոյացած թափոնների տեղափոխման և ոչնչացման ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգին հայտ էր ներկայացրել ԱՁ Արայիկ Ծատուրյան՝ (Հասցե՝ ք. Երևան, Ավան Առինջ, 1 մ/շ, 1/10, բն 11, հեռ. +374 94 800877, էլ. հասցե՝ tsaturyan.consulting@gmail.com, ՀՎՀՀ՝ 80375638):

ԱՁ Արայիկ Ծատուրյան-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝ հրավերով պահանջվում էր, որպեսզի մասնակիցը ունենա ՀՀ վտանգավոր թափոնների

վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղափոխման գործունեության լիզենզիա կամ համապատասխան պայմանագիր՝ վնասազերծման լիցենզիա ունեցող կազմակերպության հետ (այդ դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նշված պայմանագրի և լիցենզիայի պատճենները):

ԱՁ Արայիկ Ծատուրյանի ներկայացված փաստաթղթերից երևում է , որ վերջինս պայմանագիր է կնքել «Վեստ Մենեջմենտ» ՍՊԸ-ի հետ, որը չունի ՀՀ վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղափոխման գործունեության լիզենզիա, «Վեստ Մենեջմենտ» ՍՊԸ-կողմից ներկայացված լիցենզիան ՀՀ-ում վտանգավոր, թափոնների գուրծունեության լիցենզիա է: «Վեստ Մենեջմենտ» ՍՊԸ-ի և ԱՁ Արայիկ Ծատուրյանի միջև 2022 թ-ի հունվարի 25-ին կնքված պայմանագրի առարկան է արտադրական թափոնների օգտահանում, տեղադրում, պահում, վերամշակում և կոշտ կենցաղային աղբի հավաքում և Վեդու աղբավայր տեղափոխում, միաժամանակ չի ներկայցվել համապատասխան գերատեսչության կողմից տրամադրած փորձաքննական եզրակացություն, որով ընկերությունը թափոնների մշակման համար պետք է ունենա վառարան և վառարանի տվյալ տեսակը նախատեսված լինի թափոններն այրման եղանակով վնասազերծելու համար:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ նիստը կասեցվել է մեկ աշխատանքային օրով և էլեկտրոնային համակարգի միջոցով, ծանուցմամբ ԱՁ Արայիկ Ծատուրյանին առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով սահմանված պահանջները:

Մասնակիցը՝ ԱՁ Արայիկ Ծատուրյանը, սահմանված ժամկետում ուղարկել է նոր փաստաթղթեր: Մասնակիցի կողմից ներկայացված լրացուցիչ փաստթղթերը նույնպես չեն համապատասխանում հրավերին:

Վերոգրյալով պայմանավորված գնահատող հանձնաժողովը որոշեց հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված պահանջները՝ ԱՁ Արայիկ Ծատուրյանի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Համաձայն Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջների՝ ԱՁ Արայիկ Ծատուրյանի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում ենք Ձեզ՝

վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ սկսելու նպատակով:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-22/2» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Արայիկ Ծատուրյան» Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Արայիկ Ծատուրյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 14.03.2022թ.-ի գրությամբ դիմել է «Արայիկ Ծատուրյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.03.2022թ.-ի թիվ 26/26-1/4242-2022 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

«Արայիկ Ծատուրյան» Ա/Ձ-ն ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետրյալը.

«1) 22.02.2022թ.-ին «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ (այսուհետ՝ Պատվիրատու) armeps.am էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ էլեկտրոնային համակարգ) միջոցով հայտարարել է թիվ ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-22/01 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ Մրցույթ): Մրցույթի հիման վրա ԱՐԱՅԻԿ ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՇԻԿԻ Ա/Ձ-ն (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացրել է հայտ (այսուհետ՝ Հայտ):

2) Մրցույթի հրավերի 1-ին մասի 4.3 կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերի համաձայն՝ Մասնակիցը հայտով ներկայացնում է.

- դիմում-հայտարարություն, գնային առաջարկ,

- գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե կնքվելիք պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով,

- համատեղ գործունեության պայմանագրի պատճենը, եթե մասնակիցները սույն ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

3) Մրցույթի հրավերի 2-րդ մասի 2.1, 2.2, 2.3 և 2.5 կետերի համաձայն՝ Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված.

- ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն՝ համաձայն հրավերի հավելված N 1-ի.

- իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր, ընդ որում հայտարարագիր չի ներկայացվում, եթե մասնակիցը անհատ ձեռնարկատեր կամ ֆիզիկական անձ է.

- գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով.

- համատեղ գործունեության պայմանագիրը, եթե մասնակիցները գնման ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով).

- գնային առաջարկ՝ համաձայն հրավերի հավելված N 2-ի:

4) «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

5) Ընկերությունը Հայտով Մրցույթին ներկայացրել է իր կողմից հաստատված՝

- ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն՝ համաձայն հրավերի հավելված N 1-ի.

- գնային առաջարկ՝ համաձայն հրավերի հավելված N 2-ի:

Ընկերությունը գործակալության և համատեղ գործունեության պայմանագիր և իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր չի ներկայացրել, քանի որ Մրցույթին չի մասնակցել գործակալի միջոցով և համատեղ գործունեության կարգով, ու հանդիսանում է անհատ ձեռնարկատեր:

6) Վերոգրյալից երևում է, որ Ընկերությունը Հայտով ներկայացրել է հրվերի 1-ին և 2-րդ մասերով պահանջվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը՝ ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն և գնային առաջարկը, որոնց գնահատման արդյունքում Մրցույթի հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ չեն արձանագրվել, որպիսի հանգամանքներում կարելի է փաստել, որ Հայտը համապատասխանում էր հրավերով նախատեսված պայմաններին, ուստի Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի ուժով Հայտը պետք է գնահատվեր որպես հրավերի պահանջներին բավարարող և չմերժվեր, սակայն հաշվի չառնելով նշյալ հանգամանքը՝ Պատվիրատուն Հայտը մերժել է պատճառաբանելով, որ այն չի համապատասխանում հրավերին:

7) Ինչ վերաբերվում է հրավերին կից պայմանագրի նախագծի տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցում նշված պայմաններին, ապա Ընկերությունը այդ

պայմանները պետք է ապահովեր պայմանագրի կատարման փուլում, այսինքն վառարանի վերաբերյալ փորձաքննության եզրակացությունը և լիցենզիայի կամ լիցենզիա ունեցող կազմակերպության հետ կնքված պայմանագրի վերաբերյալ տեղեկատվությունն Ընկերությունը պետք է ներկայացներ պայմանագրի կատարման փուլում, այլ ոչ թե Հայտով: Որտեղից հետևում է, որ Հայտով այդ տեղեկատվությունները չներկայացնելը Հայտը մերժելու համար հիմք չէր կարող հանդիսանալ:

2.1. 22.02.2022թ.-ին Պատվիրատուն armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հայտարարել Մրցույթ:

2.2. Մրցույթի հիման վրա Ընկերությունը ներկայացրել է Հայտ:

2.3. Հայտով, ի թիվս այլ փաստաթղթերի, Ընկերությունը ներկայացրել է՝ ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն՝ համաձայն հրավերի հավելված N 1-ի և գնային առաջարկ՝ համաձայն հրավերի հավելված N 2-ի, որոնք համապատասխանել են հրավերով նախատեսված պայմաններին:

2.4. Ընկերության Հայտը մերժվել է պատճառաբանելով, որ այն չի համապատասխանում հրավերին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Մրցույթի հրավերի 1-ին մասի 4.3 կետի իհամաձայն՝ «4.3 Մասնակիցը հայտով ներկայացնում է՝

1) իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում-հայտարարություն՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը, որը ներառում է՝

ա) հավաստում սույն հրավերով սահմանված մասնակ¬ցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին.

բ) հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, սույն հրավերի 1-ին մասի 2.4 կետով սահմանված կարգով և ժամկետում որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության կամ սույն հրավերով նախատեսված վարկունակության վարկանիշ ունենալու մասին.

գ) հայտարարություն սույն ընթացակարգի շրջանակում գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին.

դ) հայտարարություն սույն ընթացակարգի շրջանակում իրեն փոխկապակցված անձանց և (կամ) իր կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իրեն պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության բացակայության մասին.

ե) իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն հավելված 1-ի: Հայտարարագիր չի ներկայացվում, եթե մասնակիցը անհատ ձեռնարկատեր կամ ֆիզիկական անձ է:. Ընդ որում եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված հայտարարագիրը որը հայտերը բացելուց հետո ավտոմատ եղանակով հրապարակվում է համակարգում, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է նաև տեղեկագրում:

2) իր կողմից հաստատված գնային առաջարկ.

4) գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե կնքվելիք պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով:

5) համատեղ գործունեության պայմանագրի պատճենը, եթե մասնակիցները սույն ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): (…):»

Մրցույթի հրավերի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ «(…): Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝

1) «Պիտանելիության չափորոշիչ».

2.1 ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված N 1-ի.

2.2 գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով.

2.2.1 իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 1-ին մասի 4.3 կետի 6-րդ ենթակետով նախատեսված՝ հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական ռեսուրսների օգտագործման մասին հայտարարություն՝ համաձայն հավելված N 1.1-ի.

2.3 համատեղ գործունեության պայմանագիրը, եթե մասնակիցները գնման ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով).

2) «Ֆինանսական չափորոշիչ».

2.5 գնային առաջարկ՝ համաձայն հավելված N 2-ի: (…)»

Վերոգրյալից հետևում է, որ եթե մասնակիցը (անհատ ձեռնարկատերը) Մրցույթին մասնակցում է առանց գործակալի կամ համատեղ գործունեության, ապա վերջինս հայտով ներկայացնում է՝ ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված N 1-ի և գնային առաջարկ՝ համաձայն հավելված N 2-ի: Ուստի, եթե այդ երկու փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին, ապա մասնակցի հայտը պետք է գնահատվի բավարար և ենթակա չէ մերժման:

Ինչպես երևում է սույն գործի փաստերից, Ընկերությունը Հայտով, ի թիվս այլ փաստաթղթերի, ներկայացրել է իր կողմից հաստատված դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված N 1-ի և գնային առաջարկ՝ համաձայն հավելված N 2-ի, որոնցում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ չեն արձանագրվել, որպիսի հանգամանքներում կարելի է փաստել, որ դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին: Ուստի ելնելով վերագրյալից կարող ենք արձանագրել, որ Ընկերության Հայտը համապատասխանում էր հրավերով սահմանված պայմաններին և ենթակա չէր մերժման: Հետևաբար, Ընկերության Հայտը մերժելով Պատվիրատուն գործել է ոչ իրավաչափ և թույլ է տվել Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

Ինչ վերաբերվում է հրավերին կից պայմանագրի նախագծի տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցում նշված պայմաններին, ապա Ընկերությունը այդ պայմանները պետք է ապահովեր պայմանագրի կատարման փուլում, այսինքն վառարանի վերաբերյալ փորձաքննության եզրակացությունը և լիցենզիայի կամ լիցենզիա ունեցող կազմակերպության հետ կնքված պայմանագրի վերաբերյալ տեղեկատվությունն Ընկերությունը պետք է ներկայացներ պայմանագրիրը կնքելուց հետո, քանի որ այդ պահանջները նախատեսված են պայմանագրով, որը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 1-ին մասի համաձայան՝ ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում կնքելու պահից: Հետևաբաև, քանի դեռ պայմանագիրը կնքված չէ Ընկերությունը այդ տեղեկությունները ներկայացնելու պարտականություն չի կրում: Ուստի ելնելով նշյալից կարող ենք փաստել, որ Հայտով այդ տեղեկատվությունները չներկայացնելը Հայտը մերժելու համար հիմք չէր կարող հանդիսանալ:

Ամփոփելով վերոգրյալը կարող ենք փաստել, որ Ընկերությունը մասնակցելով Մրցույթին ներկայացրել է հրավերի պահնաջներին համապատասխանող հայտ, որպիսի հանգամանքներում այն ենթակա չէր անբավարար գնահատման: Ուստի խնդրում ենք

Ընկերությանը չվերագրել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված խախտումը:»:

Ելնելով վերոգրյալից՝ Մասնակիցը բողոքներ քննող անձին խնդրել է ամբողջությամբ մերժել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Արայիկ Ծատուրյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված՝ ՍՑ-ԼՕ-2022/116 ծածկագրով ընթացակարգը:

4. <u>ՍՑ-ԼՕ-2022/116 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի կողմից գործիքների, կայանի գործունեության արդյունքում գոյացած թափոնների տեղափոխման և ոչնչացման ծառայությունների ձեռքբերման նպատակով 15.02.2022թ.-ին հայտարարվել է «ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-22/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով հաստատված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ծառայություն մատուցող կազմակերպությանը պետք է ունենա ՀՀ վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղափոխման գործունեության լիզենզիա կամ համապատասխան պայմանագիր՝ վնասազերծման լիցենզիա ունեցող կազմակերպության հետ (այդ դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նշված պայմանագրի և լիցենզիայի պատճենները):

iii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել միայն «Արայիկ Ծատուրյան» Ա/Ձ-ն:

iv. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-22/2» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 22.08.2022թ.-ից մինչև 28.02.2022թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Արայիկ Ծատուրյան» Ա/Ձ-ի կողմից հայտին կից ներկայացված լիցենզիայից պարզ չէ,

արդյոք վերջինս հնարավորություն ունի մատուցելու հրավերով նախատեսված գոյացած թափոնների տեղափոխման և ոչնչացման ծառայությունը:

vi. Նույն կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետը, որոշել է մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել Մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vii. Հանձնաժողովի քարտուղարի կողմից անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցումը armeps.am համակարգի միջոցով 23.02.2022թ.-ին ուղարկվել է Մասնակցի tsaturyan.consulting@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեին:

viii. Հանձնաժողովը շարունակելով նիստը, արձանագրել է, որ Մասնակցի կողմից ներկայացված լրացուցիչ փաստաթղթերը նույնպես թերի են, մասնավորապես՝ ներկայացված լիցենզիաների ներդիրները տրված են միայն «Աղբ բանեցված կուտակիչներ, կապարաթթվային մարտկոցներ» տեսակի թափոնի համար, մինչդեռ Պատվիրատուի կողմից ներկայացվախ հայտում նշված են 10 տեսակի թափոններ, ուստի այս մասով Մասնակցի հայտը մի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է Մասնակցի հայտը մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.03.2022թ.-ի թիվ 26/26-1/4242-2022 գրությամբ «Արայիկ Ծատուրյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի կողմից գործիքների, կայանի գործունեության արդյունքում գոյացած թափոնների տեղափոխման և ոչնչացման ծառայությունների ձեռքբերման

նպատակով 15.02.2022թ.-ին հայտարարված «ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-22/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյուն¬քում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի կողմից գործիքների, կայանի գործունեության արդյունքում գոյացած թափոնների տեղափոխման և ոչնչացման ծառայությունների ձեռքբերման նպատակով 15.02.2022թ.-ին հայտարարվախ «ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-22/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ հրավերի թիվ 1 հավելվածով հաստատված տեխնիկակն բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ծառայություն մատուցող կազմակերպությանը պետք է ունենա ՀՀ վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղափոխման գործունեության լիզենզիա կամ համապատասխան պայմանագիր՝ վնասազերծման լիցենզիա ունեցող կազմակերպության հետ (այդ դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նշված պայմանագրի և լիցենզիայի պատճենները): Հանձնաժողովի 22.08.2022թ.-ից մինչև 28.02.2022թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Արայիկ Ծատուրյան» Ա/Ձ-ի կողմից հայտին կից ներկայացված լիցենզիայից պարզ չէ, արդյոք վերջինս հնարավորություն ունի մատուցելու հրավերով նախատեսված գոյացած թափոնների տեղափոխման և ոչնչացման ծառայությունը, ինչով պայմանավորված որոշում է կայացվել մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել Մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչի մասին Հանձնաժողովի քարտուղարի կողմից անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցումը armeps.am համակարգի միջոցով 23.02.2022թ.-ին ուղարկվել է Մասնակցի tsaturyan.consulting@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեին: Հանձնաժողովը շարունակելով նիստը, արձանագրել է, որ Մասնակցի կողմից ներկայացված լրացուցիչ փաստաթղթերը նույնպես թերի են, մասնավորապես՝ ներկայացված լիցենզիաների ներդիրները տրված են միայն «Աղբ բանեցված կուտակիչներ, կապարաթթվային

մարտկոցներ» տեսակի թափոնի համար, մինչդեռ Պատվիրատուի կողմից ներկայացվախ հայտում նշված են 10 տեսակի թափոններ, ուստի այս մասով Մասնակցի հայտը մի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է Մասնակցի հայտը մերժել:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ

աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Արայիկ Ծատուրյան» Ա/Ձ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-22/2» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպիսի պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.03.2022թ.-ի թիվ 26/26-1/4242-2022 գրությամբ «Արայիկ Ծատուրյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/116 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Արայիկ Ծատուրյան» Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**